«ՄԵՌԵԼՆԵՐՈՒՍ ԻԲՐԵՎ ԽԱՉ՝ ԵՍ ԱՅՍ ԾԱՌԸ ՏՆԿԵՑԻ»

1988 թվական, դեկտեմբերի 7, ժամը 11.41: Ժամանակը կանգնեց, սակայն շարժվեց, ցնցվեց ամեն բան: Ով հասցրեց, դուրս փախավ այնտեղից, ուր պարտավոր էր լինել իբրև մանկապարտեզի սան և դպրոցի աշակերտ, իբրև գործարանի բանվոր և ղեկավար, իբրև աշխատող և տնօրինող: Շատեր, շա՜տ շատեր չհասցրեցին դուրս գալ և մնացին ավերված շենքի ու գործարանի, խանութի ու դպրոցի փլատակների տակ: Փլվեց շենքը, թաղը, թաղամասը, քաղաքը, գյուղը, շրջանը:

Երկրաշարժ էր: Դարերի ընթացքում երկրաշարժին սովոր Հայաստանում անգամ աննախադեպ, սարսափելի: Տարերային աղետ՝ դարերով աղետ ու արհավիրք դիմակայած ժողովրդի գլխին. աղետներից ամենաաղետալին, ամենաանսպասելին:

Առաջին պահին ոչ ոք չէր պատկերացնում տարողությունը: Հետո հետզհետե որոշակի դարձան աղետի վայրը, ժամանակը, տարածքն ու ընդգրկումը: Ամբողջ Արևելյան Հայաստանը և դեպի արևելք մինչև Աստրախան, իսկ հյուսիսից մինչև Թբիլիսի: Իրոք՝ երկրաշարժ Անդրկովկասում: Բայց աղետի կենտրոնը Հայաստանի հյուսիսային բարգավաճ քաղաքներն էին՝ Լենինական, Սպիտակ, Կիրովական և Ստեփանավան, ու հարյուրավոր շեն ու ւսռատ գյուղերը՝ Արջուտ, Ջաջուռ և ուրիշներ:

Լենինականում՝ հարյուրավոր շենքեր փուլ եկան, շատ ավելին դարձան անբնակելի:

Սպիտակը հավասարվեց գետնին. այս անգամ այս դարձվածքը պետք էր ընկալել բառացի:

Կիրովականում կործանվեցին շենքեր, խարխլվեցին չքանդվածները, բայց բարեբախտություն էր, որ քիմիական կոմբինատը մնաց անվնաս, թե չէ երկրորդ աղետը, քիմիական աղետը կամայացներ այդ անտառախիտ գեղեցիկ քաղաքը:

Ստեփանավանը ավելի շատ փրկվեց, քան կործանվեց, փառք Աստուծո:

Տասնյակ գյուղեր կործանվեցին ամբողջությամբ, հարյուրավոր գյուղեր մասամբ տուժեցին:

Եվ ամեն տեղ ավեր ու մահ, մա՜հ, մա՜հ:

Երկրաշարժը ցնցեց ամբողջ աշխարհը: Ոտքի ելան Խորհրդային Միության բոլոր ժողովուրդները, օգնության հասան աշխարհի պետությունները, հեռու-հեռավոր, Հայաստանը քարտեզից հազիվ ճանաչող: Օգնության ձեռ-

Հոգեմեղքիտ, արեւմտյան մեծ խաղաղության ցմրուտ

քը դարձավ տաք հագուստ և վրան, դեղորայք և բժշկական օգնություն՝ հազարավոր վիրահատություններ, տասնյակ հազարավոր մարդիկ, այդ թվում և պետության ղեկավարներ շտապեցին իրենց արյունից բաժին հանել արյունաքամ հայ մարդուն: Աղետը միավորեց մարդկությանը վիրքիկ Հայաստանի շուրջ:

* * *

Մեծ էր ցնցումը նաև հայոց հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում: Առաջին պահի երկրաշարժային տատանումներից հետո Ամենայն Հայոց Հայրապետի հոգին այս տարի քանիերորդ անգամ տագնապեց իր հոտի հեղված արյամբ, այս անգամ աղետալիորեն շատ զոհերի օգնության կոչերով:

Կիրակի, 11 դեկտեմբեր: Մայր Աթոռ Ս. Էջմիածին: Եկեղեցին և շրջափակը հեղեղված է սգակիր բազմությամբ: Մթնոլորտը մահերգական է. չկա ժպիտ, թվում է, բազմությունը չի շնչում. լուռ են մարդիկ, քարացել են հայացքները:

Հոգեհանգիստ է Մայր տաճարում:

Երկրաշարժի զոհերի հիշատակի հոգեհանգստյան պաշտոն:

Հայոց Հայրապետը միաբանական թափորով անցնում է ժողովրդի միջով. կենդանանում են աչքերը հույսի տենչով. «Դու ես այս ժողովրդի տերը, Վեհափառ, օգնիր մեզ», «Հավաքիր ժողովրդիդ, ուժ տուր ապրելու, Վեհափառ»: Եվ աչքերը լցվում են արցունքով, արտասուքները թափվում են: Լալ է, ուրեմն կենսունակություն կա, հաղթահարվում է քարացածությունը աղետի սարսափից:

Սրբազան պատարագ: Պատարագիչ Ներսես սրբազան հոր փրկության մաղթանքը, երգչախմբի առավել քան երբեք մեղմ ու զգացական երգը, հոգեպարար, վեհ ու խորհրդավոր մթնոլորտ:

«Հայր մեր»-ից առաջ Վեհափառ Հայրապետը սուրբ խորան է բարձրանում եպիսկոպոսաց դասով:

Ամենայն Հայոց Վազգեն Ա Հայրապետը այս ծանր արհավիրքի պահին տալիս է իր պատգամը.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
(11 դեկտեմբեր 1988 թ.)

«Ցանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ». ամէն:

«Քրիստոս Աստուած մեր հոգւոցն հանգուցելոց արա հանգիստ եւ ողորմութիւն»:

Հոգեհանգստեան պահն է այս, սիրելի վշտահար և սգակիր ժողովուրդ: Հոգեհանգստեան պահ, սակայն ոչ սովորական: Այսօրուայ հոգեհանգիստը կարող ենք համեմատել միայն Ապրիլ 24-ի հոգեհանգստի հետ, երբ մենք այդ օրը համազգային կերպով ի Հայաստան և ի սփիւռս աշխարհի ոգեկոչում ենք յիշատակը մեր երկու միլիոն նահատակների, որոնք զոհուեցին 1915 թուականի Մեծ ցեղասպանութեան օրերին՝ կազմակերպուած և գործադրուած Օսմանեան Թուրքիոյ կողմէ:

Անսպասելի կերպով, բնութեան տարերքի մոլեգնած կոյր ուժերը կոր-



Վեհարան Հարգարգան ամենայնի Առաջնորդ Լեհիստանի ցրագարարք բարեխոսությամբ

ծանեցին մեր շէն Շիրակի աշխարհը, կործանուեցին քաղաքներ և գիւղեր: Վերջին տուեալներով յայտնի է, թէ զոհուած են բազում տասնեակ հազար բնակիչներ, մանաւանդ երեխաներ, ուսանողներ. վիրաւորուած են հազարաւորներ ու բազմահազար ընտանիքներ մնացել են անտուն և անօթևան, որոնք շուարած, շփոթուած թափառում են աւերակների կոյտերի վրայ, փնտռում իրենց մեռելներին, քարացած հոգիներով, չեն կարող նոյնիսկ հասկանալ, թէ ինչ պատահեց, ի վիճակի չեն խօսելու, նոյնիսկ ի վիճակի չեն մտածելու և լաց լինելու: Մենք այս պահին, գրեթէ նոյն հոգեվիճակի մէջ ենք, կարծես մենք էլ չենք կարող մտածել, իսկ, թէ ի՞նչ և ինչո՞ւ պատահեց այս արհաւիրքը, չենք կարող նոյնիսկ մենք էլ լաց լինել: Միայն պիտի կարողանանք աղօթել, երևի զոհեալների հոգիների խաղաղութեան և հանգստութեան համար:

Սիրելի ժողովուրդ, թէև բոլորս, բացատրելի կերպով, հուսահատ ե վիրաւոր վիճակի մէջ ենք, սակայն չմոռանանք, որ մենք քրիստոնեաներ ենք, և մեր հաւատացեալ ժողովուրդը իր ողջ պատմութեան ընթացքում բազում նահատակութիւններ է կրել տարբեր առիթներով, առաւել կամ նուազ չափով: Նոյնիսկ պատմաբանները հայ ժողովրդի գոյութիւնը այսօր մի հրաշք են համարում: Ինչպէ՞ս տոկաց, ինչպէ՞ս դիմացաւ հայ ազգը այդ բոլոր փորձութիւններին, ինչպէ՞ս հաղթահարեց մահուան ուժերը, ինչպէ՞ս կարողացաւ վերածնուել:

Այսօր էլ մենք նոյն ժողովուրդն ենք, այսօր էլ մենք չենք ուզում վախենալ մահուանից, չենք ուզում հուսահատուել և չպիտի հուսահատուենք: Ընդհակառակն, այս առաջին փոթորկումի օրերից յետոյ մենք մեզ աւելի պիտի հաւաքենք, պիտի հաւաքենք մեր հոգեկան ուժերը ամբողջ, պիտի կոչենք մեր ժողովուրդը միասնության, մեր հայրենի կառավարության կողքին, մէկ սիրտ, մէկ հոգի, որպէսզի բուժենք մեր վէրքերը և մեր հայեացքը դարձնենք դէպի երկինք ու տեսնենք այնտեղ վառ և պայծառ յոյսի աստղերը մեր ժողովուրդի: Մահից առաջ և մահից յետոյ յաղթական վերածնւում են կեանքի ուժերը, բացւում է կեանքի ծաղիկը վերստին: Եւ մենք, իբրև քրիստոնեաներ, հաւատում ենք, որ յաւերժութեան լուսաբացը սկիզբ է առնում գողգոթաների տառապանքներից: Ինչպէս մեր Տէրը՝ Յիսուս Քրիստոս «մահուամբ զմահ կոխեաց», մեր ժողովուրդն էլ թէ՛ անցեալում ե թէ՛ հիմա պիտի յառաջ ընթանայ՝ իր հայեացքը ուղղած դէպի ապագան՝ քանդելով մահուան կապանքները իր իսկ մահուան գնով:

Սիրելի ժողովուրդ, այս ոգով ե այս սուրբ հաւատքով մեր աղօթքը բարձրացնենք առ Աստուած: Թող Տէրը մեր աղերսանքները ընդունի որպէս խունկ ուղիղ բարձրացող դէպի բարձունքները երկնքի, իր ողորմութեան երեսը դարձնի մեզ և մնայ նաև յետ այսու պահապան և օգնական, որպէսզի հայ ազգը Հայ Եկեղեցու առաջնորդութեամբ շարունակի իր առաքելութիւնը այս արևի տակ ու նորանոր բարձունքների հասնի:

Եւ ուխտենք այս պահին նաև որ մեզանից ամէն մէկը իր կարողութեան չափով մէկ-մէկ ծառ տնկի Շիրակի սուրբ հողի վրայ, որպէս մեր մեռելների վրայ խաչափայտ, ինչպէս ժամանակին Մեծ Եղեռնի առիթով ծանօթ բանաստեղծն է ասել՝ «Մեռելներուս իբրև խաչ՝ ես այս ծառը տընկեցի»: Ահա այս ուխտով մենք զօրանանք, հաւաքենք մեր ուժերը և անվախ, անտրտունջ ու յամառօրէն յառաջ ընթանանք դէպի նոր նուաճումներ՝ մանաւանդ ոգեկան իմաստով:

Ոգի նշանակում է մարդկային բարոյական բոլոր ուժերի համադրու-



Հոսան ղեկերեցի հիմնադրամը Ս. Աստվածածին գոյությունը սկսել է 11-ՐԴ դարից։ Լուսանկարում Հաղարծնի տաճարն է

թիւնը, որի գաղտնիքը մեր ժողովուրդն էլ ունի, և որի ապացոյցը տուել է դարեր շարունակ: Այսօր էլ մենք նոյն ժողովուրդն ենք, և անհաւասիկ մեր ճակատագրի առաջ կանգնած անսասան, նոյն ուխտն ենք կատարում՝ ապրելու, գոյատևելու և յաղթահարելու ամէն դժուարութիւն:

Սիրելի սգակիր ժողովուրդ, մենք խորապէս զգացուած ենք այն բոլոր ցաւակցական և եղբայրական օգնութեան արտայայտութիւններից, որոնք ներկայացուում են մեր ժողովրդին, մեր պետութեանը և այս ողբերգական օրերին:

Ես նախ իմ գնահատանքն ու հիացումն եմ ուզում յայտնել մեր անբողջ ժողովրդին, հայ ազգին ի Հայաստան և ի սփիւռս աշխարհի, որոնք մէկ սիրտ, մէկ հոգի դարձած՝ պայքարում են ամոքելու մեր վէրքերը և մօտ ապագային վերականգնելու քարուքանդ եղած մեր քաղաքները: Ես իմ օրհնութիւնն եմ ուզում բերել նաև այն երիտասարդներին, համալսարանական ուսանողներին, որոնք այս օրերին բանակային ուժերի հետ միասին անձնազոհաբար, ձեռք-ձեռքի տուած, աստուածահաճոյ գործ են կատարում՝ դուրս բերելու զոհուածների մարմինները փլատակների տակից, հաւաքելու վիրաւորներին և ինչ-որ չափով ամոքելու վիշտը բոլոր այնտեղ տառապեալ հոգիների:

Չեմ կարող իմ երախտագիտութիւնը չյայտնել նաև ՍՍՀՄ բոլոր այն եղբայր ազգութիւններին և արտասահմանի բազմաթիւ պետութիւններին ու ժողովուրդներին, որոնք այնքան սրտբաց կերպով օգնութեան ձեռք են մեկնում մեր վիրաւոր Հայաստանին:

Երախտագէտ սրտով ուզում եմ յիշել նոյն իրողութիւնը՝ արտայայտուող եկեղեցական մակարդակի վրայ: Յիշեմ Ռուս Պրավոսլաւ Եկեղեցու հոգեւորականութեան վերաբերմունքը խորազգաց ցաւակցական հեռագրերով և ռուսաց Պատրիարքի նուիրաբերումը մէկ միլիոն ռուբլու, Հռոմի Պապի ցաւակցական խօսքը և նուիրաբերումը 100.000 դոլլարի, նաև Անգլիկան Եկեղեցու պետ Քենթըրպըրիի Արքեպիսկոպոսի ջանքերի շնորհիւ Բրիտանական կառավարութեան առած որոշումը՝ մեր աղէտեալների օգտին նուիրաբերելու մեծ գումար: Եւ վստահ եմ, որ տակաւին նման նոր նուիրատուութիւններ պիտի լինեն: Արդէն խոստումներ կան, որոնք կը ստացուեն իրենց ժամանակին տարբեր երկրներից, տարբեր եկեղեցական կազմակերպութիւններից և բարեսիրական ու մարդասիրական միութիւններից:

Մեր Մայր Աթոռ Ս. Էջմիածինն էլ իր համեստ միջոցներով տրամադրեց 500.000 ռուբլի աղէտեալների օգտին, որով նախորդ նուիրաբերումների հետ միատեղ Մայր Աթոռի նուիրաբերումը հասաւ 1.700.000 ռուբլու:

Սակայն սրանով չի վերջանում մեր պարտականութիւնը: Մենք, իբրև Հայաստանեայց Եկեղեցու գլուխ, իբրև Ս. Էջմիածնի առաջին սպասաւոր, պիտի շարունակենք մեր ճիգերը ի գործ դնել, որպէսզի առաւել մեծ չափով նուիրաբերումներ կատարուեն և հնարաւոր սահմաններում, երևի գարունը բացուելուց յետոյ, ծրագիրներ մշակուեն վերաշինելու համար մեր քանդուած քաղաքները: Ես մտածում եմ իմ կոչը ուղղել մանաւանդ Հիւսիսային և Հարաւային Ամերիկաների հայերին, որոնք մօտաւորապէս մէկ միլիոն ժողովուրդ են հաշուում, յանձնարարելու, որ մեծագումար հանգանակութիւններ կազմակերպեն յատկապէս մէկ նպատակի համար՝ սկիզբը դնելու քանդուած մեր մէկ քաղաքի վերաշինութեան, ասենք՝ Սպիտակի, այնտեղ կառուցելով հինգից-տասը հազար բնակչութեան համար անհրաժեշտ բնակութեան շէնքեր և հիմնարկներ: Վստահ եմ, որ այս մեծ ծրա-



Վեհափառ Հայրապետը օրհնում է աղետից փրկված երեխային

գիրը անպայման կ'իրականանայ և խորհրդանշական, քաջալերիչ կը դառնայ բոլորիս համար: Եւ, տայ Աստուած, ոչ թէ հոգեհանգիստներով, այլ գոհաբանական մաղթանքներով դիմաւորենք վերակառուցումը, վերազարթօնքը քանդուած քաղաքների:

Այո, ուխտենք, սիրելիներ, մնալ անսասան մեր այս հաւատքի վրայ, ամուր կանգնած մեր ազգի բոլոր արդար իղձերի իրականացման պատուանդանի վրայ, առանց տկարանալու մեր արդար իղձերը իրականացնելու պայքարի մէջ: Ուխտենք ամբողջ հոգով, մեր բոլոր ուժերը լարած, որպէսզի յետագայ սերունդների առաջ ամօթով չմնանք:

Այս հաւատքով, աղօթենք այսօր առ Աստուած, որպէսզի Տէրը հանգիստ և խաղաղութիւն պարգևի բոլոր զոհեալներին, Սուրբ Հոգով մխիթարի բոլոր սգաւորներին, զօրացնի նրանց հաւատքը՝ ապրելու ու գոյատևելու, և կամքը՝ յամառօրէն աշխատելու ու կերտելու նոր արշալոյս:

«Հոգւոցն հանգուցելոց, Քրիստոս Աստուած, արա հանգիստ և ուղղմութիւն»: Ամէն:

Ապա տեղի է ունենում հոգեհանգստյան արարողություն՝ սրտառուչ, խաղաղաբեր:

«Յաւիտենական յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»:

*
* *

Հետ հոգեհանգստյան Վեհափառ Հայրապետը ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ տիար Ս. Վարդանյանի, տեղակալ Ռ. Զարգարյանի, Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Գարեգին եպիսկոպոսի, Տ. Պարգև և Տ. Ասողիկ եպիսկոպոսների և այլ աշխատակիցների ուղեկցությամբ ճանապարհ է ընկնում դեպի Շիրակի դաշտ, ողբերգական Լենինական:

Ճանապարհին հետզհետե ավտոմեքենաները խտանում են՝ Լենինականի մուտքին անանցանելի դառնալու համար: Սկսում են երևալ կիսաքանդ, ապա և ամբողջապես քանդված շենքերը: Մեքենաներ, փրկարարներ, սգավոր բազմություն: Ահա «Յոթ վերք» եկեղեցին: Բարեբախտաբար փուլ է եկել միայն զանգակատունը: Գմբեթը ճաքեր ունի, բայց կանգուն է: Վեհափառ Հայրապետին դիմավորում է հրաշքով փրկված Շիրակի թեմի առաջնորդ Տ. Նարեկ սրբազանը: Վեհափառ Հայրապետը արցունքներով գրկախառնվում է առաջնորդ սրբազանի հետ: Արտասվում են հավաքվածները: Հետզհետե հավաքվում են հավատացյալները: Նրանց վրշտակցելու է եկել Ամենայն Հայոց կաթողիկոսը: Ավերակների միջով քայլում են դեպի եկեղեցի: Եկեղեցու ներսում ավերման հետքեր: Ընկել են աշտանակները: Կոտրվել է գրակալը: Խորանի վրա իրար են ընկել Ավետարանը, մոմակալները, խնկամանը:

Վեհափառին է դիմում առաջնորդ սրբազանը.

«Մեր ժողովրդի համար այս ծանր պահին Դուք նորից իջնում եք Ձեր Հայրապետական բարձր գահից, գալիս եք Շիրակի թեմ, ոչ թե պարզապես այցելելու մեր այս հավատավոր ժողովրդին, այլ գալիս եք մխիթարելու մեզ, նորից ոտքի հանելու Ձեր օրհնությամբ և Ձեր մխիթարական խոսքով: Ուստի և օրհնեցեք մեզ, Վեհափառ Տեր: Մենք կարոտ ենք Ձեր մխիթարող խոսքին և Հայրապետական օրհնությանը»:

Փա՞ռք քեզ, Տեր... կրկնել է նա մեկ երեխա

Այսպես ավելի սրտով ժողովրդին է դիմում Նորին Սրբությունը.

«Սիրելի սգավոր ժողովուրդ,

Ես գալիս եմ Սուրբ Էջմիածնից: Այսօր կիրակի է, այնտեղ սրբազան պատարագ էր մատուցվում: Մենք հոգեհանգստյան պաշտոն կատարեցինք և աղոթեցինք Լենինականի և Ծիրակի շրջանի բոլոր զոհվածների հոգիների համար: Այնտեղ հավաքված էր բազմահազար ժողովուրդ, բոլորը տխուր, արտում, արտասվող աչքերով, և բոլորի հայացքը ինձ հետ միասին հառած դեպի երկինք՝ հայցելու Աստծու ողորմությունը և օրհնությունը:

Ապա ուղևորվեցինք ձեր քաղաքը, ձեր պատուհասված Լենինականը: Եկանք ձեզի բերելու Մեր հայրական սերը, Մեր քաջալերանքը, Մեր մխիթարությանն խոսքը և Մեր օրհնությունը: Գիտեմ, ճանապարհին ոչ միայն փլատակ, քանդված շենքերը տեսա, այլև եկան սգավոր մայրեր, քույրեր, երիտասարդներ, որոնք իրենց սրտի ցավն էին ներկայացնում ինձ, իրենց վիշտը, իրենց կորուստների մասին էին խոսում: Մեր սիրտը վշտով լցվեց, Մեր աչքով տեսանք նաև ձեր այսօրվա տառապանքը և ձեր զրկանքները: Ձեր սրտերն էլ ավերակի են վերածված, ինչպես այս բազում շենքերը: Մենք պետք է ձեռք-ձեռքի տանք և միասին գործենք ազգովին, ոչ միայն Հայաստանի հայ ժողովուրդը, այլև Սփյուռքի մեր զավակները: Այս օրերին նրանք էլ փոթորկված են, հուզված, տառապում են և անընդհատ հեռագիրներով ու հեռախոսներով հայտնում, որ պատրաստ են օգնության հասնելու և հասնում են: Հարկավոր է մի քիչ էլ համբերել, մինչև այս բոլորը անցնեն, և հնարավոր չափով բոլորդ բավարարվեք, բուժվեն ձեր վերքերը, և կամաց-կամաց այս պատմական քաղաքը վերագտնի իր երբեմնի խաղաղությունն ու զվարթ կյանքը:

Ես շտապեցի անձամբ գալ, որպեսզի այս բոլորը իմ աչքով տեսնեմ և այս վկայությունը տանեմ ինձ հետ նաև արտասահման: Խոստանում եմ ձեզ, որ իմ բոլոր հնարավորությունները ի գործ պիտի դնեմ, որպեսզի ամենայն արագությամբ և ամենայն կազմակերպվածությամբ հետզհետե բնական հունի մեջ մտնի օգնության գործը բոլոր քանդված քաղաքներին և գյուղերին:

Կրկին անգամ բերում եմ ձեզ իմ հայրական բարի զգացմունքներն ու օրհնությունները: Ամեն»:

Հետո Վեհափառ Հայրապետը իր ուղեկիցներով ուղղվեց դեպի ավերակներով շրջապատված Լենինականի հրապարակ: Այստեղ է Անիի կաթողիկեի կրկնօրինակ հրաշք Ամենափրկիչ եկեղեցին: Այստեղ է, բայց՝ ավերակ: Ո՜վ նախախնամություն: Անվնաս են մնացել սուրբ խորանն ու եկեղեցու գլխավոր մուտքը՝ իր գեղեցիկ, կամարակապ լուսամուտներով: Եթե կա մուտքը և կա խորանը, ուրեմն կվերականգնվի եկեղեցին, մուտքից ներս կմտնեն հավատացյալները և խորանի առաջ ծնրադիր իրենց աղոթքը կվերառաքեն դեպի երկինք՝ իրենց զոհված հարազատների հոգիների համար:

Եվ կգա ոտքի կանգնելու պահը, կվերհառնի քաղաքը, և յուրաքանչյուր հայ այցելու մի ծառ կտնկի այս հյուրընկալ քաղաքում և գոհաբանական աղոթքով կմրմնջա.

«Մեռելներուս իբրև խաչ՝ ես այս ծառը տնկեցի»:

ԵՐՎԱՆԴ ՄԵԼՔՈՆՅԱՆ